Անդրանիկ Առաքելյան

ՊԱՂԵՍՏԻՆԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԻՋԱՐԱԲԱԿԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԻՋԱԿԵՏՈՒՄ (1992-2011 ԹԹ.)

Բանալի բառեր – Պաղեստինի հիմնախնդիր, պաղեստինաիսրայելական խաղաղ բանակցություններ, արաբական երկրներ, Յասսեր Արաֆաթ, Պաղեստինի ազատագրման կազմակերպություն:

Հոդվածում ուսումնասիրվել է Պաղեստինի հիմնախնդիրը միջարաբական հակասությունների համատեքստում: Ուսումնասիրության են առնվել հիմնականում նորագույն շրջանի իրադարձությունները՝ հընթացս անդրադառնալով նաև պատմական զարգացումներին:

Պաղեստինի հիմնախնդիրը Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո հանդիսացավ հիմնական բաժանարար գիծն արաբական աշխարհում: 1947թ. նոյեմբերի 29-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի որոշմամբ հաստատվեց Պաղեստինի բաժանման պլանը:[1] Պաղեստինի մանդատից Անգլիայի հրաժարվելուց անմիջապես հետո հրեաները հռչակեցին Իսրայել պետությունը: 1948 թ. մայիսի 15-ին սկսվեց առաջին արաբ-իսրայելական պատերազմը: Դրան հետևեցին ևս երկուսը՝1967 թ. և 1973 թ.:

Սկսած 1992 թ. իրավիճակը Պաղեստինում դարձյալ սրվեց և վերածվեց զինված ընդհարման իսրայելական զինված ուժերի և իսլամական խմբավորումների (Համաս[2], Իսլամական Ջիհադ[3] և այլն) միջև: Իսրայել պետությունը բախվեց Համասի և Իսլամական Ջիհադի արմատական իսլամի գաղափարախոսության հետ: Վախը արմատական իսլամից ստիպեց Իսրայելի ղեկավարությանը մտափոխվել և բանակցություններ վարել Պաղեստինի ազատագրման կազմակերպության (ՊԱԿ) հետ: Արդյունքում Իսրայելի նախաձեռնությամբ տեղի ունեցան գաղտնի բանակցություններ ՊԱԿ-ի ներկայացուցիչների հետ, որոնց վերջնակետը եղավ Օսլոյի հանդիպումը (Նորվեգիա)[4]: Երկկողմ բանակցությունների շնորհիվ ընդունվեց, իսկ այնուհետև 1993 թ. սեպտեմբերի 13-ին Վաշինգտոնում ստորագրվեց սկզբունքների հռչակագիրը Իսրայելի և ՊԱԿ-ի միջև[5]: Սկզբունքների հռչակագիրը հիմնված էր Իսրայել պետության և ՊԱԿ-ի փոխադարձ ճանաչման վրա: Իսրայելը նաև գնաց որոշակի տարածքային զիջումների՝ Գազայի հատվածից զորքերի անմիջապես դուրսբերում և այլն[6]: Մյուս խնդիրների լուծման հարցը դրվեց հետագա հանդիպումների վրա:

ՊԱԿ-Իսրայել համաձայնագիրը հարվածեց Սիրիայի նախագահ Հաֆեզ Ասադի հավակնոտ կեցվածքին: Վերջինս խնդիրներ ուներ ՊԱԿ-ի առաջնորդ Յասեր Արաֆաթի հետ և ցանկանում էր նրան փոխարինել պաղեստինյան շարժման մեկ այլ քաղաքական գործչով՝ Աբու Մուսայով: Ասադը Պաղեստինի խնդրի լուծումը դիտարկում էր հիմնականում «Մեծ Սիրիայի» նախագծի շրջանակներում[7]: Սակայն չափազանցված է այն տեսակետը, թե Ասադը չէր ցանկանում խաղաղություն, քանի որ այն ձեռնտու չէր իրեն: Իրականում Իսրայելը փայլուն ձևով կարողանում էր օգտագործել

---

[1] Տե՛ս Stewart Ross, Causes and Consequences of the Arab-Israeli conflict, 1995, pp. 27-28
Կարամանուկյան Շ. Լ., Արաբական Պետությունների Լիգայի դերը արաբական երկրների հակաիմպերիալիստական պայքարում, Ե., 1988, էջ 136:
Կարապետյան Ռ., Սիրիայի տեղն ու դերը արաբ-իսրայելական հակամարտությունում (1946-2000 թթ.), Կահիրե, 2008թ, էջ 54:

[2] Տե՛ս http://www.bbc.com/news/world-middle-east-13331522 (01/02/2017).

[3] Տե՛ս https://www.counterextremism.com/threat/palestinian-islamic-jihad (01/02/2017).

[4] Տե՛ս Абу Мазен (Махмуд Абас). Путь в Осло. Москва, Институт изуения Израиля и Ближнего Востока, 1996г, с. 151-159

[5] Տե՛ս Thomas L. Friedman, "Rabin and Arafat Seal their Accord as Clinton Applauds 'Brave Gamble,'" New York Times, September 14, 1993, p. A1. http://www.nytimes.com/learning/general/onthisday/big/0913.html (26/12/2016)

[6] Տե՛ս Morton A. Klein, "U.S. Aid to Arafat? No. Not until Arafat Fulfills His Promises" Middle East Quarterly (December 1995) at http://www.meforum.org/article/271. (26/12/2016)

[7] Տե՛ս Կարապետյան Ռ., նշվ. աշխ., էջ 255:

միջարաբական հակասությունները՝ Պաղեստինի հարցի կարգավորումը հետաձգելու համար[1]:

1994 թ. ՊԱԿ-ը կազմավորեց Պաղեստինյան ինքնիշխանությունը բոլոր այն տարածքներում, որոնք լքել էին իսրայելցիները[2]: 1996 թ. հունվարին տեղի ունեցան Պաղեստինի օրենսդիր խորհրդի և Պաղեստինի ինքնիշխանության նախագահի ընտրություններ: Դրանցում հաղթեցին համապատասխանաբար Ֆաթհ կուսակցությունն ու Յասեր Արաֆաթը:

Ինչպես արմատական իսլամի հետևորդները, այնպես էլ մի շարք արաբ առաջնորդներ Գազայի հատվածում և Արևմտյան ափում չընդունեցին Արաֆաթի իշխանությունն ու շարունակեցին դեմ արտահայտվել բանակցություններին: «Համաս» խմբավորումը որդեգրեց ահաբեկչության ուղին և շարունակեց հավատարիմ մնալ դրան նույնիսկ 1994թ.: Մյուսներն ուղղակի ցանկացան տապալել Օսլոյի խաղաղության գործընթացը:

1993-2001 թթ. ընկած ժամանակահատվածում ՊԱԿ-ը և պաղեստինյան ինքնիշխանությունը վեց համաձայնագիր ստորագրեցին Իսրայել պետության հետ: Նույն ժամանակահատվածում կազմակերպվեցին բազմաթիվ հանդիպումներ կողմերի միջև: Սակայն խաղաղության հաստատման փորձերն ի վերջո ձախողվեցին[3]: 2001թ. Թաբայում (Սինայի թերակղզի) վերսկսվեցին պաղեստինահիսրայելական խաղաղ բանակցությունները: Կողմերը բավականին մոտ էին վերջնական խաղաղության հաստատմանը, սակայն Իսրայելի վարչապետ Էհուդ Բարաքը ետ կանչեց Իսրայելի ներկայացուցիչներին ընտրությունների անցկացման պատճառաբանությամբ:

2002 թ. Արաբական լիգայի՝ Բեյրութում տեղի ունեցող համաժողովի ժամանակ բոլոր արաբական երկրները, բացառությամբ Լիբիայի, հաստատեցին Սաուդյան Արաբիայի կողմից առաջարկված խաղաղության նախագիծը: Նախագիծը նախատեսում էր արաբ-իսրայելական հակամարտության ավարտ՝ ներառյալ Իսրայել պետության ճանաչումն ու նրա հետ միջպետական հարաբերությունների հաստատումը: Ի պատասխան Իսրայելը պետք է զինված ուժերը դուրս բերեր 1967 թ. օկուպացված բոլոր տարածքներից (այդ թվում նաև Գոլանի բարձունքներից): Պաղեստինյան փախստականների հարցը պետք է լուծվեր համաձայն ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի թիվ 194 բանաձևի[4]: Արևմտյան ափում և Գազայի հատվածում պետք է հռչակվեր անկախ Պաղեստին պետություն՝ Արևելյան Երուսաղեմ մայրաքաղաքով: Հետագայում՝ 2007թ., Արաբական լիգան թարմացրեց այդ նախագիծը: Դա բավականին բուռն ընդունվեց արաբական աշխարհում և մասնավորապես Սիրիայում: Ասադն ընդունեց դա որպես Իսրայելի դեմ գործող միասնական արաբական ճակատի թուլացման ևս մեկ ազդանշան[5]:

Ասադի՝ պաղեստինյան քաղաքականության հիմնական գաղափարն այն էր, որ արաբական երկրները չէի կարող պատերազմել Իսրայելի դեմ և չէին կարող արդարություն հաստատել՝ բանակցություններում թույլ կողմ լինելով: Այդ իսկ պատճառով նա կտրականապես դեմ էր Իսրայելի հետ անհատական խաղաղության բանակցություններին: Սիրիան պահանջում էր արաբական միասնություն Պաղեստինի հարցում[6]:

2005 թ. Իսրայելը դուրս բերեց զորքերը Գազայի հատվածից: Այնտեղի հրեական բնակավայրերը էվակուացվեցին: Իսրայելի կողմից կառուցվեց պատնեշ Իսրայել պետության և Գազայի միջև: Չնայած դրան՝ Իսրայելը դեռևս շարունակում է օկուպացված պահել Գազայի հատվածը, քանի որ կոնֆլիկտը շարունակում է մնալ չլուծված,

---

[1] Տե՛ս նույն տեղում, էջ 272

[2] Իսրայելի վարչապետ Ռաբինը, 1993-95 թթ., կասեցնում է Արևմտյան Ափի շուրջ 80կմ² տարածքում իսրայելական բնակավայրերի կառուցման գործընթացը և հանձնում այդ տարածքները ՊԱԿ-ին:

[3] Տե՛ս Eli E. Hertz, Arab-Israeli peace agreements, http://www.mythsandfacts.org/media/user/PLO-Agreement.pdf (26/12/2016).

[4] Տե՛ս https://www.unrwa.org/content/resolution-194 (01/02/2017).

[5] Տե՛ս Curtis R. Ryan, Jordan's changing relations, Middle East Insight, 2000, pp. 83-87.

[6] Տե՛ս A. Drysdale and Raymanod A. Hinnebusch, Sirya and the Middle East Peace Process, New York, USA, 1991, p. 59.

իսկ օկուպացնող երկիրը չի կարող միայնակ փոփոխել իր տարածքի կարգավիճակը՝ առանց միջազգային հանրության և կառույցների աջակցության:

Յասեր Արաֆաթի մահվանից հետո՝ 2005 թ. հունվարին, Պաղեստինի ինքնիշխանության նախագահ ընտրվեց Մահմուդ Աբբասը՝ Ֆաթհ կուսակցությունից: Մեկ տարի անց՝ 2006 թ. հունվարին, անցկացվեցին Պաղեստինի օրենսդիր խորհրդի ընտրություններ, որոնցում Համասը ստացավ մեծամասնության ձայները՝ զբաղեցնելով 132-ից 76 տեղ[1]: Համասի և Ֆաթհի միջև տոկոսային հարաբերությունը ընտրությունների արդյունքում կազմեց 44.45 / 41.43-ի: ԱՄՆ-ը 2006 թ. 84 միլիոն դոլար հատկացրեց Մահմուդ Աբբասի նախագահական պահակազորի վերազինման և վերակազմավորման համար[2]: Իսրայելը ևս իր ներդրումն ունեցավ այդ գործընթացում[3]:

Ընտրություններից հետո Համասը հայտարարեց, որ ցանկանում է երկարաձգել զինադադարը Իսրայելի հետ: Այնուհետև Համասի պաշտոնատար ներկայացուցիչներից մեկը հայտարարեց, որ իրենք չեն հրաժարվում 2002 թ. Արաբական Լիգայի կողմից առաջարկված «խաղաղության նախագծի» պայմաններից և պատրաստ են ճանաչել Իսրայել պետությունը, սակայն միայն Իսրայելի կողմից «Պաղեստինի ժողովրդի իրավունքների» ճանաչումից հետո[4]:

2007 թ. հունիսին, աջակցություն ստանալով ԱՄՆ-ից՝ Ֆաթհը փորձեց դուրս մղել Համասին Գազայի հատվածից: Սակայն արդյունքում Համասն իր լիակատար իշխանությունը հաստատեց ողջ տարածքի վրա: Արևմտյան ուժերը իրար դեմ էին տրամադրում արաբներին, իսկ վերջիններս մեծ պատրաստակամությամբ գնում էին առճակատման: Դրանից հետո Արևմտյան ափի և Գազայի հատվածի կառավարումը բաժանվեց Ֆաթհի և Համասի միջև: Ձախողված փորձից հետո Մահմուդ Աբբասը Պաղեստինի ինքնիշխանության վարչապետ նշանակեց ԱՄՆ-ի կողմից պատրաստված տնտեսագետ Սալամ Ֆայադին: Նա հույսեր էր փայփայում, որ, ի տարբերություն ագրեսիվ տրամադրված Համասի և Իսլամական Ջիհադի, իր «լավ կառավարումը» կհամոզի Արևմուտքին, որ պաղեստինցիներն արժանի են անկախ պետականության: Հիասթափված Ֆայադը հրաժարական տվեց 2013 թ. ապրիլին[5]:

2008-2009 թթ. և 2012 թ. հարձակումները Գազայի հատվածի վրա որոշակիորեն նպաստեցին Համասի դիրքերի բարձրացմանը ինչպես պաղեստինցիների, այնպես էլ միջազգային հանրության աչքերում: Որոշ հեղինակներ կարծում են, թե Եգիպտոսի նախագահ Հոսնի Մուբարաքը աջակցություն էր ցուցաբերում Իսրայելին Գազայի հատվածի շրջափակումն ավելի խորացնելու գործում[6]:

2006 թ. դեկտեմբերից 2008 թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում Իսրայելի նոր վարչապետ Օլմերտն ու Աբբասը գաղտնի բանակցություններ են վարում՝ ընդհուպ մոտենալով համաձայնության[7]: Բանակցությունների մանրամասները 2011 թ. հունվարին հրապարակեց Ալ-Ջազիրան[8], ինչից հետո Օլմերթն ու Աբբասը ստիպված եղան պարզաբանել կատարվածը: Նրանք տեղեկացրեցին, որ համաձայնության էին եկել Պաղեստինի պետության ապառազմականացման հարցերի շուրջ, իսկ իսրայելա-պաղեստինյան սահմանը հսկելու էին ԱՄՆ-ի կողմից առաջնորդվող միջազգային

---

[1] Տե՛ս Washington Post Foreign Service, Hamas Sweeps Palestinian Elections, Complicating Peace Efforts in Mideast by Scott Wilson, http://www.washingtonpost.com/wp-dyn/content/article/2006/01/26/AR2006012600372.html (01/02/2017) .

[2] Տե՛ս http://www.globalsecurity.org/military/world/palestine/pa-elections2006.htm (01/02/2017)

[3] Տե՛ս The New York Times, Israel Confirms Arms Shipment sent to Aid Abbas, by Steven Erlanger http://www.nytimes.com/2006/12/28/world/middleeast/28cnd-mideast.html (09/01/2017).

[4] Տե՛ս http://www.merip.org/primer-palestine-israel-arab-israeli-conflict-new (01/02/2017).

[5] Տե՛ս Independent, 14 April 2013, Palestinians lash out at West as Prime Minister Salam Fayyad quits, http://www.independent.co.uk/news/world/middle-east/palestinians-lash-out-at-west-as-prime-minister-salam-fayyad-quits-8572495.html (17/01/2017).

[6] Տե՛ս Joel Beinin and Lisa Hajjar. Palestine, Israel and the Arab-Israeli conflict. Middle East research and information project. North Carolina. 2014. http://web.stanford.edu/group/sper/images/Palestine-Israel_Primer_MERIP.pdf (26/12/2016).

[7] Տե՛ս Abbas Admits For the First Time That He Turned Down Peace Offer in 2008, http://www.thetower.org/2580-breaking-abbas-admits-for-the-first-time-that-he-turned-down-peace-offer-in-2008/ (01/02/2017)

[8] Տե՛ս http://www.aljazeera.com/palestinepapers/ (01/02/2017).

խաղաղապահ ուժերը: Երուսաղեմը բաժանվելու էր երկու մասի, իսկ սրբավայրերը վերահսկվելու էին միջազգային կոմիտեն: Իսրայելը նաև թույլատրելու էր 10.000 փախստական պաղեստինցիների վերադառնալ իրենց տները (Իսրայելում)՝ ստանալով փոխհատուցում: Հիմնական հակասություններն առաջացել էին Իսրայելի կողմից բռնագրավված Արևմտյան ափի բնակավայրերի վերադարձման շուրջ: Իսրայելն առաջարկել էր այլ համարժեք տարածքներ՝ 6.3/5.8 հարաբերակցությամբ, ինչպես նաև Արևմտյան ափը Գազայի հետ կապող ստորգետնյա թունելի վերահսկողությունը: Կողմերը հույս են ունեցել, որ ԱՄՆ-ն կօգնի լուծել տարածքային անհամաձայնությունների խնդիրը, ինչպես 2000 թ. Քլինթոնի նախագահության օրոք: Սակայն 2008 թ. դեկտեմբերին բանակցությունները դադարեցվեցին Գազայի հատված իսրայելական ուժերի ներխուժման և 2009թ. փետրվարյան խորհրդարանական ընտրություններում Օլմերտի կուսակցության պարտության հետևանքով: Նոր ընտրված վարչապետ Բենիամին Նաթանյահուն հրաժարվեց շարունակել բանակցությունները:

Միջազգային կառույցներում, մասնավորապես ՄԱԿ-ում, Աբբասը կարողացավ որոշակի հաջողություններ գրանցել: Իբրև ՊԱԿ-ի նախագահ՝ Մահմուդ Աբբասը երկու անգամ դիմեց ՄԱԿ-ին՝ Պաղեստինի անդամությունը ընդունելու խնդրանքով: 2011 թ. նա դիմեց Անվտանգության խորհրդին և խնդրեց լիակատար անդամության իրավունք տալ Պաղեստինին[1]: Դիմումը չհավաքեց անհրաժեշտ 9 ձայները, չնայած ԱՄՆ-ն իրավունք ուներ արգելք (վետո) դնել և թույլ չտալ Գլխավոր ասամբլեայում հարցի քվեարկությունը: 2012 թ. նոյեմբերի 29-ին Աբբասը դիմեց Գլխավոր ասամբլեային՝ Պաղեստինին ոչ անդամ դիտորդի կարգավիճակ շնորհելու խնդրանքով: Հարցումն ընդունվեց 138 կողմ, 9 դեմ և 41 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ[2]:

Պաղեստինահիսրայելական հակամարտության լուծմանը խոչընդոտող հանգամանքներից էին հակասությունները Աբբասի և Համասի միջև: Դա խիստ լարում էր ներպաղեստինյան իրավիճակը բանակցային գործընթացում՝ պաղեստինցիներին բաժանելով երկու տարբեր ճամբարների[3]:

Մի շարք հեղինակներ կարծում են, թե արաբական պետությունների հետ շահերի միավորումը եղել է Պաղեստինի արաբների ամենամեծ սխալը: Այդ պարագայում պաղեստինցիների ազգային շահն այլևս դադարել է գոյություն ունենալ՝ հենվելով Իրաքի, Սիրիայի, Եգիպտոսի, Հորդանանի ու Լիբանանի ազգային շահերի վրա: Դա տևել է մինչև 1967 թ. արաբ-իսրայելական պատերազմը: Մինչ այդ Պաղեստինը արտաքին քաղաքականության խաղաքարտ էր Եգիպտոսի, Իրաքի, Հորդանանի կամ Սիրիայի ձեռքերում: Պաղեստինի հարցով զբաղվում էին մարդիկ, ովքեր փնտրում էին արևմուտքի ֆինանսական աջակցությունը: Այդպիսով Պաղեստինի խնդիրը նրանց համար դարձել էր երկրորդական[4]:

Որպես եզրակացություն կարելի է նշել, որ, ի տարբերություն նախորդ տասնամյակների, 1992-2011 թթ. աչքի ընկան պաղեստինյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանն ուղղված ակտիվ քայլերով, սակայն արդյունքը չէր կարող դրական լինել քանի դեռ արաբական պետություններն ու պաղեստինյան քաղաքական կազմավորումները միասնական դիրքորոշում չէին որդեգրել խնդրի շուրջ: Արաբական երկրներում իշխանության եկած ազգային հեղափոխական վարչակարգերը միակարծիք չէին պաղեստինյան հիմնախնդրի հարցում, իսկ պաղեստինյան քաղաքական կազմավորումները իշխանության համար պայքարը գերադասում էին անկախության համար միասնական պայքարից:

---

[1] Տե՛ս http://www.jpost.com/Diplomacy-and-Politics/Abbas-Were-going-to-the-UN-to-demand-full-membership (19/12/2016).

[2] Տե՛ս General Assembly Votes Overwhelmingly to Accord Palestine 'Non-Member Observer State' Status in United Nations, https://www.un.org/press/en/2012/ga11317.doc.htm (01/02/2017).

[3] Տե՛ս Joel Beinin and Lisa Hajjar, Palestine, Israel and the Arab-Israeli conflict. Middle East research and information project. North Carolina. 2014. http://web.stanford.edu/group/sper/images/Palestine-Israel_Primer_MERIP.pdf (26/12/2016).

[4] Տե՛ս Jon Kimche, The second Arab awakening, London, 1970, p. 241.

Андраник Аракелян, Палестинский конфликт в центре межарабских разногласий (1992-2011гг.),-Палестинский конфликт является одним из продолжительных конфликтов современности. Он включает Войну за независимость и Войну на истощение, Синайскую кампанию (1956), Шестидневную войну (1967), Войну судного дня (1973), Первую (1982) и Вторую (2006) Ливанскую войну. За шесть десятилетий арабо-палестинский конфликт оброс такими многочисленными взаимными обвинениями и обидами, что с каждым годом растет число пессимистов в отношении мирного сосуществования в исторической Палестине евреев и арабов.

27 ноября 2007 года Эхуд Ольмерт и Махмуд Аббас согласились начать переговоры и прийти к окончательному соглашению по палестинскому государству к концу 2008 года. Однако, сделать это не удалось, переговоры были прерваны в конце с участием нового премьер-министра Израиля Беньямина Нетаниягу и нового декабря 2008 года в связи с проведением Израилем в секторе Газа операции «Литой свинец» против группировки ХАМАС. В 2009 году переговоры с ФАТХ продолжились президента США Барака Обамы. 21 июня Нетаниягу выступил со своим планом ближневосточного урегулирования, в рамках которого выразил согласие на создание палестинского государства с ограниченными правами, в случае признания палестинцами Израиля как национального дома еврейского народа, и получения гарантий безопасности Израиля, в том числе, международных.

Ключевые слова **:**Палестинский конфликт, палестино-израильские мирные переговоры, арабские страны, Ясир Арафат, Организация Освобождения Палестины.

Andranik Arakelyan,The Palestinian issue in the centre of inter-arab contradictions (1992-2011),-On November 29, 1947, the UN General Assembly voted to partition of Palestine into two states, one Jewish and the other Arab. The UN partition plan divided the country so that each state would have a majority of its own population, although a few Jewish settlements would fall within the proposed Arab state while hundreds of thousands of Palestinian Arabs would become part of the proposed Jewish state. On May 15, 1948, the British evacuated Palestine, and Zionist leaders proclaimed the State of Israel. Neighboring Arab states (Egypt, Syria, Jordan and Iraq) then invaded Israel, claiming that they sought to “save” Palestine from the Zionists.

The 1967 war, which lasted only six days, established Israel as the dominant regional military power. The speed and thoroughness of Israel’s victory discredited the Arab regimes. In contrast, the Palestinian national movement emerged as a major actor after 1967 in the form of the political and military groups that made up the Palestine Liberation Organization (PLO).

Egypt and Syria attacked Israeli forces in the Sinai Peninsula and the Golan Heights in October 1973, on the Jewish holy day of Yom Kippur. The surprise attack caught Israel off guard, and the Arabs achieved some early military victories. Those were some of the origins of the Arab-Israeli conflict and the Palestinian issue. This article discusses the further developments of the conflict and inter-Arab cooperation problems on different occasions over Palestine.

Key words **:**the issue on Palestine, Palestine-Israel peace talks, the Arab countries, Yasser Arafat, Palestine Liberation Organization.